



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2022 թվականի թիվ 70-Ա

ք. Երևան

«ԱՄԵՂԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 08-Ի ԹԻՎ 51-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈՒԹՅԱՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով «ԱՄԵՂԻԱ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականի մայիսի 04-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը՝ *պարզեց*.

«ԱՄԵՂԻԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 08-ի ««ԱՄԵՂԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ վարչական տույժ կիրառելու մասին» թիվ 51-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) դեմ:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում դիստրիբյուտորը նշել է՝

«Գտնում ենք, որ Հանձնաժողովը բավարար չափով չի գնահատել ներկայացված ապացույցները, ուստի չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի և լրիվ և օբյեկտիվ քննությունը, հետևաբար կայացված որոշումը չի կարող համարվել իրավաչափ և ենթակա է վերացման ու փոփոխման»:

Դիստրիբյուտորի կողմից բերվել են հետևյալ պատճառաբանությունները.

Ընկերության և «Первый ТВЧ» ОА միջև 19.12.2021թ. կնքված համաձայնագրով Ընկերությունը ձեռք է բերել «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուցիայի իրավունք:

Ընկերությունը 04.02.2022թ. Հանձնաժողովին ներկայացրել է նշված տեսալսողական ծրագրի հաստատման ծանուցում, որը Հանձնաժողովի 24.02.2022թ. թիվ 26-Ա որոշմամբ հաստատվել է:

Համաձայն Հանձնաժողովի 24.02.2022թ. թիվ 26-Ա որոշման՝ Հանձնաժողովը հաստատել է «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի ծանուցումն ըստ տվյալ տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի:

Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 10-րդ մասի՝

10) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր՝ Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

Վերոգրյալից հետևում է, որ անձը ձեռք է բերում դիստրիբյուտորի կարգավիճակ հեռարձակողի հետ կնքված պայմանագրի ուժով: Պայմանագրի կնքման պահից էլ վերջինս հանդիսանում է պայմանագրում ներառված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր:

Այսպիսով, սույն դեպքում, Ընկերությունը դարձել է «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր 01.01.2022թ.-ին:

Նույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

Հիշյալ իրավական դրույթից բխում է, որ դիստրիբյուտորի գործունեությունը սկսվում է համապատասխան ծանուցում ներկայացնելուց հետո:

Սույն դեպքում ինչպես վերը նշվեց Ընկերությունը ծանուցումը ներկայացրել է 04.02.2022 թվականին, իսկ Հանձնաժողովն այն հաստատել է 24.02.2022 թվականին: Սույն գործի փաստերը հիշատակված իրավական դրույթների ներքո մեկնաբանելիս, հետևում է, որ Ընկերությունը որպես դիստրիբյուտոր պետք է գործեր 04.02.2022թ.-ից, այսինքն այն պահից, երբ Հանձնա-նողովին ներկայացրել է համապատասխան ծանուցում (Օրենքի 54-րդ հոդված 1-ին մաս), իսկ 01.01.2022 թվականից Ընկերությունը հանդիսացել է նշված տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր (Օրենքի 3-րդ հոդված 10-րդ մաս):

«Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունք տրամադրելու մասին

Սույն գործի փաստերից հետևում է, որ Ընկերության և «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության միջև 01. 02. 2022թ. կնքվել է համաձայնագիր, որով Ընկերությունը «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը վերահաղորդման իրավունքով փոխանցել է «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը: Թեև համաձայնագրի կնքման պահին Ընկերության կողմից դեռևս ծանուցում Հանձնաժողովին չէր ներկայացվել, սակայն համաձայնագրի կնքման պահին Ընկերությունը հանդիսացել է «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր՝ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 10-րդ կետի: Այսինքն, համաձայնագրի կնքման պահին Ընկերությունը ներկայացել է որպես դիստրիբյուտոր, ըստ հիշատակված օրենսդրական նորմի: Բացի դրանից նշված պահից որպես դիստրիբյուտոր գործելու հանգամանքի իրավաչափությունը հաստատվել է նաև հենց Հանձնաժողովի կողմից: Մասնավորապես, Հանձնաժողովի 24. 02. 2022թ. թիվ 26-Ս որոշմամբ հաստատվել է ընկերության կողմից ներկայացված ծանուցումը՝ համաձայն իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի: Ինչպես վերը նշվեց Ընկերությունն իրավատիրոջ հետ պայմանագիր կնքել է դեռևս 01. 01. 2022 թվականից, իսկ Հանձնաժողովի նման բովանդակությամբ որոշումից հետևում է, որ Ընկերության կողմից հիշատակված տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունքով փոխանցումը 01. 02. 2022թ. -ին իրականացվել է համաձայն պայմանագրի, ուստի այն չի կարող դիտարկվել որպես Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը «Капитан фантастика» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունք տրամադրելու մասին

Վերոգրյալ պատճառաբանությունները կիրառելի են նաև «ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունք տրամադրելու մասով: Բացի վերոգրյալ պատճառաբանություններից հարկ է ընդգծել, որ սույն դեպքում սվյալ ընկերության հետ «Капитан фантастика» տեսալսողական ծրագրի վերահաղորդման իրավունք տրամադրող համաձայնագիրը կնքվել է 07. 02. 2022 թվականին, այսինքն այն պահից հետո, երբ Ընկերությունը Հանձնաժողովին ներկայացրել է համապատասխան ծանուցում, և եթե նշվածը վերլուծենք Հանձնաժողովի մեկնաբանությամբ, այսինքն, գործում է բացառապես ծանուցում ներկայացնելուց հետո, ապա սվյալ դեպքում համաձայնագիրը կնքվել է ծանուցում ներկայացնելուց հետո:

Նշված համաձայնագրի գործողությունը թեև սկսվում է 01. 02. 2022 թվականից, սակայն այնուամենայնիվ, Ընկերությունը սվյալ դեպքում որպես նշված տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր գործել է ծանուցում ներկայացնելուց հետո:

Այսպիսով, վերոգրյալ պատճառաբանությունները բավարար են Հանձնաժողովի Վարչական ակտը վերացվելու համար, քանի որ ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ Ընկերության կողմից թույլ չի տրվել Վարչական ակտով պատճառաբանված իրավախախտումը, ուստի պետք է ընդունվեր այլ վարչական ակտ:

Դիստրիբյուտորը վարչական բողոքով խնդրում է վերացնել Հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 08-ին ընդունված թիվ 51-Ա որոշումը և կարճել դիստրիբյուտորի նկատմամբ հարուցված թիվ 8 վարչական վարույթը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ դիստրիբյուտորի կողմից Հանձնաժողովի վարչական ակտի դեմ 2022 թվականի մայիսի 04-ին բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով 2022 թվականի

փետրվարի 28-ին դիստրիբյուտորի նկատմամբ հարուցել էր թիվ 8 վարչական վարույթը: Վարչական վարույթը հարուցվել էր տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության կողմից առանց «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցում ներկայացնելու գործունեություն իրականացնելու փաստը:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են ցանցային օպերատորների կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկին և պարզվել է, որ դիստրիբյուտորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ խախտվել է Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը և դիստրիբյուտորի կողմից թույլ է տրվել իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասի հատկանիշներին:

Անդրադառնալով վարչական բողոքում բերված այն փաստին, որ Հանձնաժողովը չի իրականացրել վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության օրենսդրական պահանջը, ապա Հանձնաժողովն ևս մեկ անգամ արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ Օրենքով դիստրիբյուտորի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում գործել Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո միայն, իսկ տվյալ դեպքերում դիստրիբյուտորը չի կատարել Օրենքի պահանջը: Եվ դիստրիբյուտորի այն պարզաբանումը, որ իրենց կողմից 04.02.2022 թվականին ներկայացված ծանուցումը, որը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 24.02.2022 թվականին, ուստի դիստրիբյուտորը հիշատակված տեսալսողական ծրագրի գործունեությունը ճիշտ է, առերևույթ պետք է սկսեր 04.02.2022 թվականին, սակայն հաշվի առնելով, որ Հանձնաժողովը հաստատել է տեսալսողական ծրագիրը՝ համաձայն իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի (իսկ իրավատիրոջ հետ պայմանագիրը կնքվել է 01.01.2022 թվականին), ուստի դիստրիբյուտորի կողմից 01.01.2022 թվականին կնքված պայմանագիրը համարվում է իրավաչափ: Այսինքն, ըստ դիստրիբյուտորի եզրակացման հետևում է, որ Հանձնաժողովը հենց ինքն է հաստատել այն հանգամանքը, որ դիստրիբյուտորն իրավունք ունի գործելու սկսած իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի ամսաթվից:

Ելնելով վերը նշվածից, կրկին նշենք, որ այստեղ խոսքը չի գնում իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի իրավաչափ լինելուն և դրանից բխող դիստրիբյուտորի այն սխալ եզրակացությանը՝ Հանձնաժողովը հաստատելով տեսալսողական ծրագիրը դիստրիբյուտորին իրավունք է վերապահում գործելու սկսած իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի ամսաթվից: Հայաստանի Հանրապետության տարածքում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կարգավիճակ ունեցող ցանկացած անձ կարող է գործել օրենսդրության համաձայն Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո միայն, այլ ոչ թե իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի օրվանից:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված) և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտը ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով:

Դիստրիբյուտորի կողմից 2022 թվականի ապրիլի 08-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով կրկին ներկայացվել են դեռևս վարչական վարույթի շրջանակներում ներկայացված հիմնավորումները և Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա կրկին ուսումնասիրվել են ներկայացված փաստերը և Հանձնաժողովն ևս մեկ անգամ արձանագրում, է, որ դիստրիբյուտորի բացատրությունները հիմնավոր և բավարար հիմք չեն, իրավախախտման փաստը բացառելու և դիստրիբյուտորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա փաստերով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է իրավաչափ, իսկ դիստրիբյուտորի կողմից վարչական բողոքի շրջանակում լրացուցիչ ապացույցներ և փաստեր չեն ներկայացվել:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված ժամկետում իրականացված վարչարարության արդյունքում 2022 թվականի ապրիլի 08-ին ընդունված թիվ 51-Ս վարչական ակտն իրավաչափ է և օրենքով սահմանված պահանջներին համապատասխան է ընդունվել, նշում է պարունակում այն բոլոր փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը չի կարող ուժը կորցրած ճանաչվել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում է.

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Մերժել «ԱՄԵԴԻԱ» ՄՊ ընկերության վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 08-ի թիվ 51-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԵՌՈՒՍՏՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

17 մայիսի 2022թ.

ք. Երևան